ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2>>

ք. Երևան

<< 26 >> << ապրիլի>> 2017թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կարպ-Գազ-Ռադ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Բեգլարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև

N ը/կ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքների կատարման վերջնաժամկետը
1	Հալաբյան փող. հ 3 շենքի բակի հիմնանորոգում	**<<2017թ հունիսի 30-ը>>**
2	Մարգարյան փող. հ20/3 շենքի բակի հիմնանորոգում	**<<2017թ սեպտեմբերի 30-ը>>**

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տույժերը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **7920000.0 (յոթ միլիոն ինն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է **երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:**

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում **է www.gnumner.am հասցեով** ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Եղվարդ, Պ. Սևակ 3/7
Կենտրոնական գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղվարդ մ/ճ
Հ/Հ 900052473429	Հ/Հ 163228127540
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 03309185
Գ. Չթրյան----------	Հ. Բեգլարյան----------
Ստորագրություն	(ստորագրություն)
Կ.Տ	Կ. Տ

Հավելված թիվ 1
<< 26 >> ապրիլի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2 >> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 3 շենքի բակում խաղահրապարակի հիմանանորգման աշխատանքներ						
h/h	Հիմնա-վորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի ընդ.արժ հազ.դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	16-60	Գոյություն ունեցող բետոնե եզրաքարերի քանդում 300*150	գծմ	75.0000	0.6380	47.8500
2	23-143	Տուֆե քարից ավտոտնակի քանդում 200մմ հաստ.	մ^3	5.0000	5.5136	27.5680
3	23-161	Գոյություն ունեցող բետոնե հիմքի քանդում 150*400	մ^3	2.5000	8.3628	20.9070
4	23-147	Ե/բետոնե սյուների քանդում 200*200մմ	մ^3	0.6000	14.3295	8.5977
5	9-180 q=0.6,0.7	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում	տ	0.7120	48.1611	34.2907
6	9-209 q=0.6,0.7	Մետաղական զրուցարանի ապամոնտաժում	տ	1.8000	63.7325	114.7185
7	16-57	Ա/բետոնե շերտի քանդում միջ 80մմ	մ^3	2.5000	2.6471	6.6178
8	48-4	Տարածքի մաքրում աղբից	մ^2	290.0000	0.0248	7.1920
9	23-228 գնաց. 3	Շին աղբի և մետաղ.մասերի բարձում և տեղափոխում 15կմ հեռ.վրա	տ	26.8000	2.1097	56.5400
		Վերանորոգման աշխատանքներ				0.0000
1	16-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300	գծմ	80.0000	4.3287	346.2960
2	16-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 80*200	գծմ	104.0000	3.7067	385.4968
3	16-85	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 20-40մմ ֆրակց. 100մմ հաստ	մ^2	55.0000	0.8258	45.4190

4	16-82	Ա/բետոնե շերտի իրականացում 50մմ հաստությամբ մանրահատ-	մ^2	55.0000	2.9449	161.9695
5	1-1133	Տեղանքի հորիզոնական հարթեցում ձեռքով	մ^2	400.0000	0.1450	58.0000
6	1-1592	Բուսահողի բարձում և տեղափոխում	մ^3	22.4000	4.0158	89.9539
7	16-131	Տարածքի պատրաստում կանաչապատման համար բուսահողի /սնահողի/ և կարմիր ավազի լիցքով 15սմ	մ^2	240.0000	0.4120	98.8800
8	16-133	Սերմի ցանում	մ^2	240.0000	0.0921	22.1040
9	16-49	Կապույտ ավազ խողահրապարակներում 150մմ	մ^3	4.2000	2.0523	8.6197
10	5-85 5-86	Ց/ավազե չոր խառնուրդ 5sm	մ^2	80.0000	0.6121	48.9680
11	16-88	Բետոնե մայթի գունավոր սալիկների իրականացում կարերը ավազով լցնելով	մ^2	80.0000	3.8712	309.6960
12	14-398	Մետաղական ավտոտնակի ներկում	մ^2	55.0000	0.8035	44.1925
		Զրուցարան				0.0000
1	16-85	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 20-40մմ ֆրակց. 100մմ հաստ	մ^2	12.5000	0.8258	10.3225
2	5-85 5-86	Ց/ավազե չոր խառնուրդ 5 սմ	մ^2	12.5000	0.6121	7.6513
3	16-88	Բետոնե 50 մմ մայթի գունավոր սալիկների իրականացում կարերը ավազով լցնելով	մ^2	12.5000	3.8712	48.3900
4	16-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 80*200	գծմ	13.6000	3.7067	50.4111
5	9-209	Զրուցարանների մոնտաժում պողպատե էլեմենտներով	տ	0.3450	102.8257	35.4749
6	ինֆ.տեղ	Պողպատե խողովակ 120*120*3.5	մ	10.6132	2.9746	31.5700
7	ինֆ.տեղ	Պողպատե խողովակ 80*80*2	մ	22.5873	1.2690	28.6632
8	ինֆ.տեղ	Պողպատե խողովակ 30*30*1.5	մ	75.1880	0.4015	30.1880
9	8-265	Ծածկույթ գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով	մ^2	14.0000	3.3214	46.4996
10	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ զրուցարան	մ^2	35.0000	0.8035	28.1225
11	25-18	Նստարանների մոնտաժում պողպատե խողովակներով 2 հատ	տ	0.1337	52.2419	6.9858
12	ինֆ.տեղ	Խողովակ 60*30*2.5	մ	7.2000	0.8593	6.1870
13	ինֆ.տեղ	Խողովակ 50*30*2	մ	13.8600	0.6084	8.4324

14	ինֆ.տեղ	Խողովակ 50*25*2	մ	36.0000	0.5702	20.5272
15	ինֆ.տեղ	Ամրան Φ18A500c	տ	0.0032	405.9593	1.2991
16	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ նստարան	$մ^2$	8.9000	0.8035	7.1512
17	25-18	Սեղանի մոնտաժում պողպատե էլեմենտներով 200*80սմ	տ	0.0749	52.2419	3.9144
18	ինֆ.տեղ	Խողովակ 40*40*3	մ	4.4000	0.8878	3.9063
19	ինֆ.տեղ	Խողովակ 30*30*3	մ	8.8000	0.6516	5.7341
20	ինֆ.տեղ	Պողպատե թիթեղ 3մմ	$մ^2$	1.6000	7.2002	11.5203
21	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ սեղան	$մ^2$	20.8000	0.8035	16.7128
22	շուկա	Մետաղական պահարան	հատ	1.0000	30.1366	30.1366
		Նստարան 8 հատ				0.0000
1	8-11	Խճի շերտ	$մ^3$	1.6000	5.2078	8.3325
2	26-11	Ե/բետոնե հիմնային հարթակ B15 բետոնով	$մ^3$	1.7600	28.3417	49.8814
3	ինֆ.տեղ	Ցանց 8-1, 8-2	կգ	59.2000	0.2263	13.3970
4	25-18	Նստարանների մոնտաժում պողպատե խողովակներով	տ	0.5349	52.2419	27.9431
5	ինֆ.տեղ	Խողովակ 60*30*2.5	մ	28.8000	0.8593	24.7478
6	ինֆ.տեղ	Խողովակ 50*30*2	մ	55.4400	0.6084	33.7297
7	ինֆ.տեղ	Խողովակ 50*25*2	մ	144.0000	0.5702	82.1088
8	ինֆ.տեղ	Ամրան Φ18A500c	տ	0.0128	405.9593	5.1963
9	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ	$մ^2$	35.6000	0.8035	28.6046
		Աղբաման 5 հատ				0.0000
1	1-193	Հիմքերի համար գրունտի քանդում	$մ^3$	1.0000	1.5950	1.5950
2	8-11	Խճի տոփանում հիմքերի տակ 70մմ	$մ^3$	0.2000	5.2078	1.0416
3	26-10	Բետոնե հիմքերի իրականացում B15 բետոնով	$մ^3$	0.9000	35.1378	31.6240

4	23-228 գնաց. 3	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	տ	2.8800	1.8324	5.2773
5	25-16	Աղբամանների մոնտաժում պողպատե էլեմենտներով	կգ	87.7000	0.0567	4.9726
6	ինֆ.տեղ	Տաշտաձև հեծան N 10	մ	2.0000	2.4484	4.8968
7	ինֆ.տեղ	Պողպատե ուղղանկյուն խողովակ 40*20*2մմ	մ	7.0000	0.4496	3.1472
8	ինֆ.տեղ	Պողպատե ուղղանկյուն խողովակ 15*15*1,25մմ	մ	6.0000	0.1588	0.9528
9	ինֆ.տեղ	Պողպատե թիթեղ 2մմ	$մ^2$	3.3500	4.7306	15.8475
10	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ	$մ^2$	7.8000	0.8035	6.2673
		Ոռոգում				0.0000
1	16-57	Ա/բետոնե շերտի քանդում միջ 80մմ	$մ^3$	0.7000	2.6471	1.8530
2	1-193	Գրունտի քանդում ձեռքով 3-րդ կարգի	$մ^3$	19.2000	1.5950	30.6240
3	23-1	Ավազե անկողնու պատրաստում խողովակների շուրջը 30սմ	$մ^3$	14.4000	2.8530	41.0832
4	22-117	Պոլիէթիլենային Φ57մմ խողովակի մոնտաժում ոռոգման համար	գծմ	80.0000	0.7023	56.1840
5	22-117	Պոլիէթիլենային Φ32մմ խողովակի մոնտաժում ոռոգման համար	գծմ	14.0000	0.3798	5.3172
6	22-365	Ձևավոր մասեր	հատ	8.0000	1.0214	8.1712
7	22-383	Պողպատե փական Φ57	հատ	1.0000	7.5916	7.5916
8	22-383	Պողպատե փական Φ32	հատ	7.0000	4.3515	30.4605
9	22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.0000	1.8057	1.8057
10	1-201	Հողի ետլիցք ձեռքով	$մ^3$	2.0000	0.8120	1.6240
11	23-228 գնաց. 3	Շին աղբի և գրունտի բարձում և տեղափոխում 15կմ հեռ.վրա	տ	6.0200	2.1097	12.7004
12	16-85	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 20-40մմ ֆրակց. 100մմ հաստ	$մ^2$	10.0000	0.8258	8.2580
13	16-82	Ա/բետոնե շերտի իրականացում 50մմ հաստությամբ մանրահատ-	$մ^2$	10.0000	2.9449	29.4490
		Բազրիք 39գծմ	28			0.0000

1	1-193	Գրունտի քանդում ձեռքով հենասյուների համար	$մ^3$	1.5000	1.5950	2.3925
2	26-2	Կետային հիմքերի իրականացում B15 բետոնով	$մ^3$	1.3440	35.9685	48.3417
6	9-180	Բազրիքի մոնտաժում պողպատե էլեմենտներով	տ	0.4066	78.4580	31.8979
7	ինֆ.տեղ	Խողովակ 20*20*2	մ	252.0000	0.2818	71.0136
8	ինֆ.տեղ	Խողովակ Φ40*2	մ	30.8000	0.5294	16.3055
8	ինֆ.տեղ	125*125 պողպատե թերթ	կգ	17.3600	0.3095	5.3729
9	շուկա	Դեկորատիվ գլխադիր	հատ	29.0000	0.5702	16.5358
10	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ	$մ^2$	35.1000	0.8035	28.2029
		Ցայտաղբյուր				0.0000
1	16-57	Ա/բետոնե շերտի քանդում միջ 80մմ	$մ^3$	0.2000	2.6471	0.5294
2	1-193	3-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով	$մ^3$	6.4000	1.5950	10.2080
3	23-1	Ավազե բարձիկ 30սմ հաստ	$մ^3$	2.4000	2.8530	6.8472
4	22-117	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ20*1.9	մ	20.0000	0.3146	6.2920
5	22-365	Պոլիպրոպիլենային ձևավոր մասեր	հատ	4.0000	0.7770	3.1080
6	22-383	Պողպատե փականի տեղադրում Φ20	հատ	1.0000	2.5686	2.5686
7	1-201	Հողի ետլիցք ձեռքով	$մ^3$	4.0000	0.8120	3.2480
8	5-72	Բետոնե հարթակի իրականացում B15 բետոնով	$մ^3$	0.2000	26.6953	5.3391
9	շուկա	Բազալտե ցայտաղբյուրի տեղադրում 1000*300*300	հատ	1.0000	44.7976	44.7976
10	շուկա	Նիկելապատ փողրակ Φ12	հատ	1.0000	4.0725	4.0725
11	22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.0000	1.7923	1.7923
12	16-85	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 20-40մմ ֆրակց. 100մմ հաստ	$մ^2$	6.0000	0.8258	4.9548
13	16-82	Ա/բետոնե շերտի իրականացում 50մմ հաստությամբ մանրահատ-	$մ^2$	6.0000	2.9449	17.6694
14	23-228 գնաց. 3	Շին աղբի և գրունտի բարձում և տեղափոխում 15կմ հեռ.վրա	տ	4.6000	2.1097	9.7046

		Լուսավորության դեկորատիվ հենասյան մոնտաժում 7 հատ				0.0000
1	1-194	Գրունտի քանդում ձեռքով հենասյուների համար 4-րդ կարգի	$մ^3$	12.0500	2.8130	33.8967
2	8-11	Խճի տոփանում հիմքերի տակ 100մմ	$մ^3$	0.1750	5.2078	0.9114
3	26-2	Կետային հիմքերի իրականացում B20 բետոնով	$մ^3$	0.3500	37.6418	13.1746
4	1-201	Հողի ետլիցք ձեռքով	$մ^3$	8.0000	0.8120	6.4960
5	23-228 գնաց. 3	Գրունտի բարձում և տեղափոխում 15կմ հեռ.վրա	տ	5.4000	2.1097	11.3924
6	23-1	Ավազե շերտ	$մ^3$	3.0000	2.8530	8.5590
7	33-621	Մետաղական հենասյան մոնտաժում պատյանի հետ միասին L=3.5մ Φ108*4 133*4 L=0.3	հատ	7.0000	9.7308	68.1156
8	ինֆ.տեղ	Խողովակի արժեքը 108*4	գծմ	24.5000	2.6879	65.8536
9	ինֆ.տեղ	Խողովակի արժեքը 133*4	գծմ	2.1000	3.3802	7.0984
13	ինֆ.տեղ	Ամրան AIII Φ14	կգ	19.3000	2.5974	50.1298
10	8-363-2 8-363-3	Քառաեղջյուր բարձակ 1.5մ Φ40*3	հատ	7.0000	20.9895	146.9265
11	8-370-1	Գնդաձև լուսատու 200վտ	հատ	28.0000	4.2848	119.9744
12	շուկա	լամպ խնայող	հատ	28.0000	2.0363	57.0164
14	ինֆ.տեղ	գլխադիր	կգ	2.0000	0.2851	0.5702
15	8-618-1	Լուսատուների լիցքավորում հաղորդալարով АПВ 2.5	հատ	7.0000	0.7510	5.2570
16	8-149-1	Մալուխի մոնտաժում АВВГ-3*10$մմ^2$	գծմ	30.0000	0.3946	11.8380
17	8-418-7	Պլաստմասե խողովակ Φ70	գծմ	80.0000	0.4589	36.7120
18	8-418-6	Պլաստմասե խողովակ Φ50	գծմ	20.0000	0.3483	6.9660
19	10-775-2	Բաժանարար տուփ	հատ	7.0000	0.9002	6.3014
20	10-775-2	Ճյուղավորման տուփ	հատ	7.0000	0.9002	6.3014
21	8-471-1	Հողանցման էլեկտրոդ 50*50*5 L=1.5m	հատ	1.0000	2.4433	2.4433

22	8-472-2	Շերտապռոպատ 40*4 L=3.5m	գծմ	3.5000	0.4076	1.4266
23	8-591-3	Անջատիչ 16Ա	հատ	2.0000	1.1106	2.2212
24	8-717-1	Ժամանակի ռելեի մոնտաժում	հատ	1.0000	14.1125	14.1125
25	14-398	Պողպատե մասերի ներկում 2 անգամ	$մ^2$	8.4000	0.8035	6.7494
		Ընդամենը՝				4000.000
		Շահույթ 10%				400.000
		Ընդամենը				4400.000

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ք. ԵՐԵՎԱՆ ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ 20/3 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5		
		<u>Քանդման աշխատանքներ</u>				
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /250$մ^2$/	տն	0.3800	0.8425	0.3202
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	0.3800	1.6786	0.6379
3	E46-101	Ա/բ ծածկույթի քանդում իր նախաշերտով, $h_{միջ}$=8սմ	$մ^2$	23.0000	0.3026	6.9598
4	E27-36	Գոյություն ունեցող եզրաքարերի ապամոնտաժում՝ բետոնե հիմքով	գմ	45.0000	0.6283	28.2735
5	P9-26 կիր.	Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում	գմ	45.0000	0.3343	15.0435
10	E1-961	III կարգի բնահողի կտրում ձեռքով /խաղահրապարակներում, անցուղիներում, եզրաքարերի տեղադրման համար/	$մ^3$	14.8000	1.5708	23.2478
11	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	29.4000	2.2498	66.1441

		Կառուցողական աշխատանքներ				
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	$մ^3$	0.6300	5.8086	3.6594
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	45.0000	4.0300	181.3500
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	$մ^3$	0.2500	5.8086	1.4522
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	40.7000	2.9338	119.4057
		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	$մ^3$	1.9250	5.8000	11.1650
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով	$մ^3$	1.5400	11.0431	17.0064
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	$մ^2$	38.5000	3.5195	135.5008
		Ցայտաղբյուրի պատրաստման, տեղադրման աշխատանքներ				
1	E6-20	Ցայտաղբյուրի տեղի բետոնացում B15 դասի բետոնով	$մ^3$	0.0300	30.0464	0.9014
2	E17-91 շուկա	Ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտե քարից	հատ	1.0000	91.2660	91.2660
3	շուկա	Ամրան Φ14A500c	տ	0.0014	220.8830	0.3004
4	շուկա	Պող. թիթեղ 200x200x2մմ	$մ^2$	0.0400	5.1119	0.2045
5	շուկա	Ցինկապատ թասակ Φ200մմ, h=100մմ	հատ	1.0000	6.4913	6.4913
6	շուկա	Ցայտիչի տեղադրում Φ15մմ	հատ	1.0000	4.4627	4.4627
7	E1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով, կողալիցքով	$մ^3$	46.2000	1.5708	72.5710
8	E1-969 E1-1184	Բնահողի ետլիցք ձեռքով կողալիցքի մշակված բնահողից տոփանելով	$մ^3$	34.6500	0.9562	33.1323
9	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	17.3300	2.2498	38.9890
10	E23-1	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում	$մ^3$	8.9300	2.8275	25.2496
11	E22-448	Հավաքովի ե/բ դիտահորի կառուցում	$մ^3$	0.1700	39.7138	6.7513
12	E11-11	Բետոնե նախապատրաստական շերտ	$մ^3$	0.1200	22.6970	2.7236
13	E11-5	Թեթև խիճ	$մ^3$	1.3000	5.7886	7.5252
14	P9-118	Մետաղական դռնակ	տ	0.0150	378.3034	5.6746
15	շուկա	Ռետին	գմ	3.0000	0.3246	0.9738
16	շուկա	Ծխնի	հատ	2.0000	0.2434	0.4868
17	շուկա	Փական	հատ	1.0000	1.2171	1.2171
18	շուկա	Ջերմամեկուսիչ սալ (երկտավր 30x3 L=400մմ-2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարիսխ-4հատ,	կոմպ	1.0000	12.9825	12.9825

		փրփրապլաստ h=100մմ -1հատ, հեղույս L=140մմ, Φ 8-6հատ)				
19	E22-117	Ջերմամեկուսիչ նյութ	գմ	1.5000	0.2778	0.4167
20	շուկա	Շին. սիլիկոն	հատ	1.0000	0.7952	0.7952
21	E15-613	Մետաղական դռնակի յուղաներկում	$մ^2$	3.0000	0.4183	1.2549
22	E22-117	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու)	գմ	25.0000	0.9165	22.9125
23	E22-117	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի)	գմ	18.0000	0.3101	5.5818
24	E22-117	Պլաստմասե պատյան խողովակ DN32	գմ	8.0000	0.3592	2.8736
25	E16-134	Մետաղե գնդային փական DN15	հատ	1.0000	2.7717	2.7717
26	E18-215	Ջրի ֆիլտրի մոնտաժում DN15	հատ	1.0000	2.4292	2.4292
27	E16-199	Թիակավոր բազմաշիթ ջրաչափի մոնտաժում DN15	հատ	1.0000	10.7046	10.7046
28	E22-365	Ճկուն կցորդիչ DN15	հատ	3.0000	1.2606	3.7818
29	E22-375	Պողպատե կարճախողովակ երկկողմանի պարուրակով DN20, L=0.02մ	հատ	1.0000	1.9902	1.9902
30	E22-375	Պողպատե կարճախողովակ երկկողմանի պարուրակով DN20, L=0.06մ	հատ	1.0000	2.2336	2.2336
31	E22-365	Պոլիէթիլենե անկյունակ, de20	հատ	4.0000	0.7738	3.0952
32	E22-365	Պոլիէթիլենե խամութային անցում, de100/15	հատ	1.0000	1.5852	1.5852
33	E22-312	Պոլիէթիլենե (PE) de15 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0.0430	46.3400	1.9926
		<u>Այլ աշխատանքներ</u>				
5	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաշարի իրականացում	գմ	38.5000	5.7355	220.8168
7	Գնահաշվարկ N3	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	5.0000	7.7617	38.8085
8	Գնահաշվարկ N4	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	5.0000	35.3960	176.9800
9	Գնահաշվարկ N5	Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.0000	344.6095	344.6095
10	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	$մ^3$	3.1300	3.6423	11.4004
11	E6-2	Խաղասարքերի հիմքերի իրականացում B20 դասի բետոնով /Խաղասարքերը նախագծով նախատեսված չեն/	$մ^3$	0.3500	36.8139	12.8849
12	E27-42 E27-42-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստ.	$մ^3$	1.1500	0.5281	0.6073
13	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ. /300x150մմ չափերով եզրաքարերի երկայնքով՝ 0.5մ լայնությամբ/	$մ^2$	23.0000	1.9852	45.6596
14	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	$մ^3$	6.5250	0.3175	2.0717
15	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	9.7880	4.4576	43.6310
16	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 150մմ հաստությամբ	$մ^2$	43.5000	1.3125	57.0938
17	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	$մ^2$	43.5000	0.1285	5.5898

18	E48-214	Սերմի ցանում 1մ² - 35գր	մ²	43.5000	0.1766	7.6821
		Նախահաշիվ N1-2 էլեկտրատեխնիկական մաս				
1	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ³	2.9400	2.7703	8.1447
2	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	24.5000	0.1664	4.0768
3	շուկա	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 0.49մ³+0.49մ³ /	մ³	0.9800	1.4151	1.3868
4	8-417-7	Խողովակ վինիպլաստե Ø50մմ	գմ	24.5000	0.3925	9.6163
5	E8-146-1	ԱԲՎԳ 4x10մմ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	24.5000	0.8692	21.2954
6	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ³	0.7350	0.8025	0.5898
7	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	1.8300	2.2498	4.1171
8	Գնահաշվարկ N6	Լուսավորության միաբարձակ հենասյուների տեղադրում H=7.0մ	հատ	2.0000	110.2960	220.5920
		Նախահաշիվ N1-3 Ոռոգում				
		<u>Տեխնոլոգիական աշխատանքներ</u>				
1	E22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.0000	2.0973	2.0973
2	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Ø57x3.5մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	286.0000	1.4787	422.9082
3	E22-368	Թուջե կցաշուրթավոր սողնակների տեղադրում 30ч 6бр Ø50մմ Ру1.0ՄՊա	հատ	1.0000	10.6167	10.6167
4	E22-429	Պողպատե կցաշուրթերի եռակցում Ø50	հատ	2.0000	2.0495	4.0990
5	Գնահաշվարկ N12	Ջրթող հանգույցների մոնտաժում	կ-տ	5.0000	5.0436	25.2180
6	Գնահաշվարկ N13	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	կ-տ	1.0000	3.7612	3.7612
7	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում	տ	0.0015	1595.6219	2.3934
8	շուկա	Հեղույս M16, L=60մմ	կգ	1.1760	0.8520	1.0020
9	շուկա	Պնդօղակ M16	կգ	0.3360	0.8520	0.2863
10	E15-614	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ²	53.7000	0.7893	42.3854
11	E22-335	Պողպատե խողովակների լվացում Ø50մմ	գմ	286.0000	0.0213	6.0918
		<u>Շինարարական աշխատանքներ</u>				
1	E46-101	Ա/բ ծածկույթի քանդում իր նախաշերտով, $h_{միջ}$=8սմ	մ²	156.0000	0.3026	47.2056
2	E27-42 E27-42-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստ.	մ³	7.8000	0.5281	4.1192
3	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ.	մ²	156.0000	1.9852	309.6912
4	E1-961	Բնահողի մշակում ձեռքով	մ³	39.6000	1.5708	62.2037
5	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	39.6000	0.8025	31.7790

		Ընդամենը /հազ. դր./				3200.000
		Շահույթ 10%				320.000
		Ընդամենը /հազ. դր./				3520.000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ
Ք. Եղվարդ, Պ. Սևակ 3/7
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղվարդ մ/ճ
Հ/Հ 163228127540
ՀՎՀՀ 03309185

Հ. Բեգլարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<
< 26 >> ապրիլի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հալաբյան փող. հ 3 շենքի բակի հիմնանորոգում	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը**	**<<2017թ հունիսի 30-ը>>**
2	Մարգարյան փող. հ20/3 շենքի բակի հիմնանորոգում	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը**	**<<2017թ սեպտեմբերի 30-ը>>**

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ
Ք. Եղվարդ, Պ. Սևակ 3/7
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղվարդ մ/ճ
Հ/Հ 163228127540
ՀՎՀՀ 03309185

Հ. Բեգլարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 26>> ապրիլի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
3	Հալաբյան փող. հ 3 շենքի բակի հիմնանորոգում	–	–	–	3 435 907	3 435 907	3 435 907	4 400 000	4 400 000	4 400 000	4 400 000	4 400 000	4 400 000	4 400 000
5	Մարգարյան փող. հ20/3 շենքի բակի հիմնանորոգում	–	–	–	2 761 259	2 761 259	2 761 259	3 520 000	3 520 000	3 520 000	3 520 000	3 520 000	3 520 000	3 520 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ
Ք. Եղվարդ, Պ. Սևակ 3/7
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղվարդ մ/ճ
Հ/Հ 163228127540
ՀՎՀՀ 03309185

Հ. Բեգլարյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 28>> ապրիլի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 26>> <<ապրիլի>> 2017թ. կնքված
N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

<<26>> ապրիլի 2017 թ.

<<Կարպ-Գազ-Ռադ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Հ. Բեգլարյանի անձնագիր AN 0703455 տրված 06.11.2013թ 004-ի կողմից տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների** ձեռքբերման << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71>>* ծածկագրով բաց գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ

Ք. Եղվարդ, Պ. Սևակ 3/7

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղվարդ մ/ճ

Հ/Հ 163228127540

ՀԿՀՀ 03309185

Հ. Բեգլարյան-----------

(ստորագրություն)

Կ. Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղվարդ մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 163228127540

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 03309185

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝792000.0 /յոթ հարյուր իննսուներկու հազար/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71-2

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Հ. Բեգլարյան /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.